ԵՄ Թվինինգ Ծրագիր

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ Ծրագրի միջոցով

**AM09/ENP-PCA/TP/04**

# Առաքելության Զեկույց

**Բաղադրիչ Ե1 և Ե2 Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս**

Առաքելությունը իրականացրել են
Մարտին Լարսենը և Քիրստեն Բալլինգը
Դանիայի Վիճակագրություն

Հայաստան 4-14 Ապրիլի, 2011

Տարբերակ 1. Վերջնական տարբերակ

| | | |
|---|---|---|
| National Statistical Service Republic of Armenia | | Statistics Denmark |

Հեղինակի անունը, հասցեն, էլ.փոստի հասցեն

*Քիրստեն Բալլինգ*
*Sejrøgade 11*
*ԴԿ-2100, Կոպենհագեն*
*Դանիա*
*Հեռ. +45 39173121*
*KBA@dst.dk*

*Մարտին Բիրգեր Լարսեն*
*Sejrøgade 11*
*ԴԿ 2100, Կոպենհագեն*
*Դանիա*
*Հեռ. +45 39173459*
*MBL@dst.dk*

# Բովանդակությունների ցանկ

Ամփոփ նկարագիր ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**

1. Ընդհանուր մեկնաբանություններ ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**

2. Գնահատում և արդյունքներ ........ 5
2.1 Հայաստանի ՍԳԻ համապատասխանության աստիճանի գնահատումը ՀՍԳԻ պահանջներին... 7

3. Եզրակացություններ և առաջարկներ ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**3
3.1 Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման հետ կապված սահմանափակումները...**Fejl! Bogmærke er ikke defineret.**3
3.2 Գործողությունների իրականացում մինչև հաջորդ առաքելություն ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**4
3.3 Թվինինգ ծրագրի ավարտից հետո ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**5

**Հավելված 1.** Տեխնիկական առաջադրանք ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**6
**Հավելված 2**. Առաքելության ծրագիր ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**8
**Հավելված 3.** Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել ........ 20
**Հավելված 4.** Հայաստանի ՍԳԻ (հիմնված՝ IMF SDDS և սեփական գնահատականների վրա).......**Fejl! Bogmærke er ikke defineret.**
**Հավելված 5.** ՀՍԳԻ Կանոնակարգերի ներկայացում ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**8
**Հավելված 6.** Աշխատանքային ծրագիր ........ **Fejl! Bogmærke er ikke defineret.**8

# Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ՀՍԳԻ | Հարմոնիզացված Սպառողական Գների ինդեքս |
| ՍԳԻ | Սպառողական Գների Ինդեքս |
| ԿՄՀ | Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն |
| ՇԵ | Շահառու Երկիր |
| ԱՊ | Անդամ պետություն |
| COICOP / HICP | Անհատական սպառման դասակարգիչը ըստ նպատակների դասակարգման ՀՍԳԻ վերաբերյալ՝ ըստ ՀՍԳԻ Կանոնակարգի 1749/1999 |
| ՏԱ | Տեխնիկական առաջադրանք |
| ՀՀ ԱՎԾ | ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն |

# Ամփոփ նկարագիր

Հայաստանում ներկայիս ՍԳԻ կազմման մեթոդաբանության և աշխատանքային մեթոդներին ծանոթանալուց հետո, Հայաստանի ՍԳԻ ընդհանուր գնահատականն այն է, որ այն շատ որակյալ է և բավարար լավ մեկնարկ կարող է հանդիսանալ ՀՍԳԻ արտադրման համար:

Սակայն մարդկային և ՏՏ ռեսուրսների սակավությունը գործնականորեն անհնարին է դարձնում ազգային ՍԳԻ և ՀՍԳԻ միաժամանակյա կազմումը: Ռեսուրսների սակավությունը նաև խնդիր է հանդիսանում ՀՍԳԻ պահանջների համապատասխանությունը ապահովելու համար՝ մասնավորապես սույն Թվինինգ ծրագրի շրջանակներում և ընդհանուր առմամբ հեռահար ժամկետներում նույնպես:

Հաշվի առնելով այս ընդհանուր մտահոգությունը սույն Թվինինգ ծրագրի համար պատրաստվեց աշխատանքային ծրագիր՝ ներառելով բոլոր այն քայլերը, որոնք կհանգեցնեն Հայաստանում հնարավորինս լավագույն ՀՍԳԻ ներդրմանը: Աշխատանքային ծրագիրը հիմնված է Հայաստանի ներկայիս ՍԳԻ և ՀՍԳԻ պահանջների միջև ի հայտ եկած տարբերությունների վրա: Աշխատանքային ծրագրի հիմնական մտահոգիչ կետերը հետևյալն են՝ ընտրանքը, որակի ճշգրտումներ և կշիռներ:

Բացի այդ, ՇԵ փորձագետների համար որոշվեցին աշխատանքային այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մինչև Թվինինգ ծրագրի սույն բաղադրիչի շրջանակներում հաջորդ առաքելության այցելությունը:

ՇԵ փորձագետների կողմից նշված մտահոգիչ ոլորտներից է սպառողների հետ շարունակական հաղորդակցության անհրաժեշտությունը այս ծրագրի ընթացքում՝ կապված ՀՍԳԻ գաղափարի և ներկայիս ՍԳԻ և ՀՍԳԻ տարբերությունների վերաբերյալ: Հաղորդակցման նպատակն է կանխարգելել հանրության անվստահությունը պաշտոնական գնաճի ցուցանիշների հանդեպ՝ այլընտրանքային գնաճի չափման մեթոդներ ներկայացնելուց:

# 1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության հետ աշխատանքների իրականացման շրջանակներում: Սա առաջին առաքելությունն էր, որը նվիրված էր հարցերի պարզաբանմանը և այլընտրանքային մեթոդների սահմանմանը սույն ծրագրի Բաղադրիչ Ե – ի շրջանակներում, այն է՝ Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս:

Առաքելության նպատակները հետևյալն էին՝

- ՇԵ փորձագետներին իրազեկել Հայաստանի համար ՀՍԳԻ ստեղծման գործընթացի վերաբերյալ:
- Ծանոթանալ արտադրական այն մեթոդների հետ, որոնք կիրառվում են Հայաստանում ՍԳԻ արտադրման համար՝ մասնավորապես տարածքային մակարդակում:
- Որոշել այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են ՀՍԳԻ մեթոդաբանության և կանոնակարգերի հետ համապատասխանեցման համար:
- Կազմել աշխատանքային ծրագիր, որը հնարավորություն կտա լավագույնս ներկայացնելու ՀՍԳԻ Հայաստանում:

Փորձագետները ցանկանում են իրենց երախտիքի խոսքը հայտնել բոլոր այն բարձրաստիճան պաշտոնյաներին և անձանց, որոնց հետ նրանք հանդիպումներ են ունեցել Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունում, իրենց աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որը տրամադրվեց նրանց Հայաստանում գտնվելու ժամանակ և մեծապես նպաստեց փորձագետների աշխատանքին:

Սույն զեկույցում արտահայտված կարծիքները և նկատառումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որպեսզի դրանք համընկնեն Դանիայի Վիճակագրության տեսակետների հետ:

# 2. Գնահատում և արդյունքներ

Սույն առաքելության նպատակները հետևյալն են՝

- Ներկայացնել և քննարկել ՀՍԳԻ ԵՄ կանոնակարգերը
- Ձեռք բերել ՍԳԻ մեթոդաբանության և աշխատանքային մեթոդների հիմնական նկարագիրը, որով ներկայումս կազմվում է Հայաստանի ՍԳԻ-ը
- Որոշել Հայաստանի ներկայիս ՍԳԻ և ՀՍԳԻ  հիմնական տարբերությունները
- Նշել ՀՍԳԻ այն ոլորտները, որոնք առավել շատ զարգացման ենթակա են, այսինքն որտեղ զարգացման առավելությունները ավելի ակնհայտ կլինեն ներդրված ռեսուրսների համեմատությամբ
- Որոշել, թե որոնք են այն հնարավոր մեթոդաբանական սահմանափակումները կապված ՀՍԳԻ ներկայացման հետ
- Որոշել հնարավոր SS և ընթացակարգերին առնչվող խնդիրները՝ կապված ՀՍԳԻ ներկայացման հետ
- Ներգրավել համապատասխան շահառուներին քննարկումների մեջ

Բավականին արդյունավետ քննարկումներ տեղի ունեցան ՇԵ Գների բաժնի փորձագետների հետ, որոնք գերազանց ներկայացրեցին Հայաստանի ՍԳԻ արտադրման մեթոդաբանությունը և աշխատանքային գործընթացները:

Հայաստանի ՍԳԻ ներկայումս կազմվում է միջազգային չափանիշների համապատասխան, որոնք սահմանված են ՍԳԻ կազմման Սպառողական Գների Ինդեքսի Ձեռնարկում՝ *Տեսություն և Փորձառություն 2004 (ILO, OECD, Եվրոստատ, Միացյալ Ազգերի Կազմակերպություն և Համաշխարհային Բանկ):* Հայաստանի ՍԳԻ ընդհանուր գնահատականն այն է, որ այն բավականին որակյալ է:

Հայաստանի ՍԳԻ մեթոդաբանության մանրամասն նկարագիրը կարելի է գտնել Հավելված 4-ում: Հավելվածի նկարագիրը հիմնված է IMF SDDS –ի վրա և պարզաբանված և լրացված է սույն գնահատող առաքելության եզրակացություններով:

ՀՍԳԻ կանոնակարգերը ներկայացվեցին ինչպես ներքին աշխատակիցների, այնպես էլ արտաքին շահառուների համար առաքելության սեմինարի ընթացքում: Պահանջները, որոնք պետք է բավարարել ՍԳԻ –ը Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս կոչելու համար ամփոփվել են հետևյալ խմբերում՝

- •••••••
- Համադրելիության սահմանումը
- Ծածկույթը
- Գնային հասկացությունը
- Սպառման դասակարգումը
- Ինդեքսի տեսակը
- Հաճախականությունը
- Որակի ճշգրտումներ
- Կշիռներ
- Ընտրանք
- Ժամկետներ
- Հատուկ կանոնակարգեր սպառողական որոշակի ոլորտների համար

Շնորհանդեսի նյութերը զետեղված են Հավելված 5-ում:

## 2.1 Հայաստանի ՍԳԻ համապատասխանության աստիճանի գնահատումը ՀՍԳԻ պահանջների հետ

Հայաստանի ներկայիս ՍԳԻ համապատասխանության աստիճանը ՀՍԳԻ սկզբունքների հետ գնահատելիս առաջնորդվում են միևնույն ընթացակարգերով՝

Շրջանակ

- Համապատասխան է

Ծածկույթ

- Հիմնականում համապատասխանում է. անհրաժեշտ է ներառել, դիտարկել և ուսումնասիրել հետևյալ ոլորտները՝

1. **Ավտոմեքենաների ապահովագրությունը** պետք է ընդգրկել, եթե այն նշանակալի է: Ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության համակարգը Հայաստանում ներդրվել է 2011 թվականի Հունվարի 1 ից: Ապահովագրության այլ տեսակներ, բացի սեփականության ապահովագրությունից, որը չպետք է ընդգրկվի ՀՍԳԻ մեջ, ներկայումս լայնորեն տարածված չեն Հայաստանում, սակայն անհրաժեշտ է դրանք դիտարկել:

2. **Օգտագործված ավտոմեքենաները** ընդգրկված չեն Հայաստանի ՍԳԻ –ում, չնայած այն փաստին, որ շատ սպառողներ հենց գնում են օգտագործված մեքենաներ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ օգտագործված ավտոմեքենաները գնվում են այլ սպառողներից, կամ գնորդը մեկնում է արտասահման և ձեռք է բերում դրանք արտասահմանում: Այս երկու դեպքերում էլ  այն չպետք է ընդգրկված լինի ՀՍԳԻ-ում: Օգտագործված մեքենաների ձեռք բերումը ավտոմեքենաների մատակարարներից Հայաստանում այնքան էլ տարածված չէ, սակայն ոլորտը պետք է առավել մանրակրկիտ ուսումնասիրվի:

3. **Այլ օգտագործված ապրանքները** նշանակալի ազդցություն չունեն Հայաստանում:

4. **Մանկապարտեզները** ցանկացած տեսակի ընդգրկված են COICOP 10 –ի մեջ: Կրթություն՝ սա կախված է նրանից, թե արդյոք կրթությունը տեղի է ունենում հենց մանկապարտեզներում, թե դա պարզապես մի վայր է, որտեղ երեխաները անցկացնում են իրենց ժամանակը: Պետք է ուսումնասիրվի թե արդյոք այն մանկապարտեզները, որոնք միայն խաղալու վայրեր են հանդիսանում, այնքան մեծ են, որ այս նմանատիպ մանկապարտեզները տեղափոխվեն COICOP 12.4՝ Սոցիալական ապահովագրություն:

5. **Ինտերնետային խանութները** սկզբունքորեն պետք է ընդգրկված լինեն: Ներկայումս ինտերնետային խանութները Հայաստանում նոր զարգացող ոլորտ է, և այն պետք է հետագայում ներառվի ՀՍԳԻ –ում եթե էական կշիռ է կազմում սպառման մեջ: Այս ոլորտը պետք է դիտարկվի:

6. **Սեփականատիրոջ կողմից զբաղեցված բնակարանները**՝ ընդգրկված չեն Եվրոպայի ՀՍԳԻ –ում, սակայն բավականին աշխատանք է տարվում կամ այն ներառելու ՀՍԳԻ –ում կամ էլ ստեղծելու առանձին Բնակարանների Գնային Ինդեքս (ԲԳԻ): Հայաստանի վիճակագրական ծառայությունը ունի բավարար տվյալների մուտք, որը խոստումնալից է թվում Հայաստանում ԲԳԻ կազմելու առումով: Ինչևէ, այս հարցը առաջնային անհրաժեշտության հարց չէ սույն ծրագրի շրջանակներում, քանի որ ՍԶԲ (OOH) կանոնակարգը ԵՄ անդամ պետությունների համար ներկայումս դեռևս ընդունված չէ:

<u>Գնային հասկացություն</u>

- Համաձայն ՀՍԳԻ 2601/2000 Կանոնակարգի, ծառայությունների արժեքը պետք է ներառված լինի այն ամսվա ինդեքսում, որ ամսում որ տվյալ ծառայությունը ձեռք է բերվել, այլ ոչ թե այն ամսում երբ դիտարկվել է դրա գինը: ՀՀ ԱՎԾ –ն պետք է Հայաստանի ՍԳԻ –ում ներառված ծառայությունները դիտարկի՝ պարզելու համար, թե որտեղ է անհրաժեշտ կատարել փոփոխություններ, որպեսզի այն համապատասխան լինի սույն Կանոնակարգի պահանջներին: Ահա այն ոլորտները, որոնք ենթակա են անհապաղ գնահատման և ըստ անհրաժեշտության նաև փոփոխման՝ օդային փոխադրման տոմսերի արժեքները, տոնական օրերի փաթեթները, հյուրանոցային ծառայությունները և հանգստի վայրերը:

- Եթե որևէ կոնկրետ առևտրի կետում բացակայում է գինը, ապա գինը հաշվարկվում է հաշվի առնելով տվյալ ապրանքի միջին գնային զարգացումը միևնույն տարածաշրջանի բոլոր առևտրի կետերում: Համաձայն ՀՍԳԻ 1749/1996 Կանոնակարգի, նման գնահատումը կարող է տեղի ունենալ միայն երկու ամիս շարունակաբար տվյալ կոնկրետ դիտարկման համար: Երրորդ ամսում անհրաժեշտ է գտնել այդ ապրանքին համարժեք փոխարինող ապրանք: Ուստի պետք է վստահ լինել, որ բացակայող գները միայն հաշվարկված են առավելագույնը երկու ամիսների ժամանակատվածի համար:

<u>Սպառման դասակարգում</u>

- COICOP դասակարգումը, որը կիրառվում է Հայաստանի ՍԳԻ-ում COICOP դասակարգիչի ազգային տարբերակն է, որը ամբողջությամբ չի համապատասխանում COICOP/HICP-ին: ՀՀ ԱՎԾ-ին անհրաժեշտ է

վերադասակարգել կշիռները և գները՝ որպեսզի դրանք համապատասխանեն COICOP/HICP-ի պահանջներին:

Ինդեքսի տեսակը

- Համապատասխանում է և էլեմենտար ինդեքսների և ագրեգացված ինդեքսների տեսակետից:

Հաճախականությունը

- Համապատասխանում է, քանի որ գների հավաքագրումը տեղի չի ունենում նախորդ ամսվա վերջում, այլ տեղի է ունենում հաշվման ամսվա ընթացքում:

Որակի ճշգրտումներ

- ՀՀ ԱՎԾ-ում հիմնական մեթոդը, որը կիրառվում է նոր էական արտադրանքը ՍԳԻ –ում ներառելու համար դա գնային համընկնումների մեթոդն է: Այս մեթոդը ավտոմատ կերպով բացառում է գների փոփոխությունները՝ կապված շուկայում նոր ապրանքների ներկայացման հետ: Հստակ անհրաժեշտություն կա առանձին դեպքերի ուսումնասիրման համար՝ կապված որակի ճշգրտումների հետ, որպեսզի դրանք համապատասխանեն ՀՍԳԻ պահանջներին: Եթե հին ապրանքի որակը, որը դուրս է գալիս ընտրանքից և նոր ապրանքը, որը մուտք է գործում ընտրանք, համադրելի են, ապա կիրառվում է ուղղակի համեմատությունների մեթոդը: Եթե մեկ այլ կողմից, երկու ապրանքների որակները համարվում են զգալիորեն տարբեր, ապա կարելի է կիրառել համընկնումների մեթոդը: ՀՍԳԻ կանոնակարգի համաձայն առանց նախապայմանի մեթոդը դա ուղղակի համեմատությունն է:

- ՀՀ ԱՎԾ –ում նշվեց, որ անհրաժեշտություն կա մանրամասն ուսումնասիրել թե ինչպես կարելի է իրականացնել արտադրանքի փոփոխությունը տեխնոլոգիական ապրանքների համար: Որպես Դանիայի ՀՍԳԻ օրինակ կարող են հանդիսանալ բջջային հեռախոսները: Եթե երկու համեմատվող հեռախոսներից մեկը ունի տեսախցիկ կամ էլեկտրոնային նամակներ ուղարկելու հնարավորություն և մյուսը չունի, ապա որակը գնահատվում է որպես տարբեր և հետևաբար կիրառվում է համընկնումների մեթոդը: Եթե երկու հեռախոսներն էլ ունեն միևնույն կարևոր ֆունկցիաները (տեսախցիկ, էլ. Փոստ, ինտերնետ և այլն), ապա համարվում է, որ դրանք երկուսն էլ ունեն միևնույն որակը և այդ դեպքում կիրառվում է ուղղակի համեմատության մեթոդը: Հաշվի չեն առնվում այնպիսի չնչին տարբերություններ, ինչպիսիք են օրինակ պիկսելների չափը և այլ փոքր ֆունկցիոնալ հնարավորություններ:

Կշիռներ

- Կշիռները պետք է վերանայվեն և արդիականացվեն ամեն տարի, որպեսզի դրանք համապատասխան լինեն ՀԱԳԻ 1114/2010 Կանոնակարգի պահանջներին: Հայաստանի ՍԳԻ դեպքում կշիռները ներկայումս արդիականացվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ միջազգային չափանիշների համապատասխան ինչպես դրանք նշված են Սպառողական Գների Ինդեքսի Ձեռնարկում՝ Տեսություն և Փորձառություն 2004: Հսկայական աշխատանք կպահանջվի այս ոլորտում համապատասխանության հասնելու համար:

- Կշիռների հետ կապված պահանջների առումով, նաև ընդհանուր պահանջներից է հաշվի առնել սկզբնական Ազգային Հաշիվների տվյալները սպառողական կառուցվածքում t-2 տարում, բացառությամբ՝ բացառիկ և պատշաճ հիմնավորված իրավիճակների: Հայաստանում Ազգային Հաշիվների տվյալները սպաառման համար տարանջատված չեն ըստ սպառման խմբերի և վերջինիս փոփոխումը այս ծրագրի Բաղադրիչ Գ-ի անմիջական նպատակը չէ՝ ՀՆԱ –ի ամբողջականության բարելավումը: Այս առումով, նպատակահարմար չէ ընդգրկել Ազգային Հաշիվների տվյալները ՀԱԳԻ կշիռների արդիականացման մեջ, և ԿԱՀ պետք է դեռևս համարվի կշիռների հիմնական աղբյուր:

- ԿԱՀ –ը հիմնված է տարեկան 5000-8000 տնային տնտեսությունների ընտրանքի վրա, որը կախված է ֆինանսավորումից: Այն տնային տնեսությունները, որոնք մասնակցում են հարցմանը ստանում են 1500 ՀՀ դրամ իրենց մասնակցության համար: Առավել հարուստ տնային տնտեսությունները մերժում են մասնակցել ԿԱՀ մեջ և այսպիսով աղքատ ընտանիքները չափից շատ են ներկայացված ԿԱՀ մեջ: Ուստի աղքատ ընտանիքների սպառողական կառուցվածքը կունենա առավել մեծ ազդեցություն ՀԱԳԻ կշիռների հաշվարկի վրա: Քանի որ չկան որևէ ռեգիստրներ կամ այլ տեղեկատվություն, որը կարող է կիրառվել հաշվարկներ կատարելու համար ԿԱՀ համակցության ընտրանքից, այս խնդրի լուծումը դեռևս առկա չէ:

- ԿԱՀ ներկայումս չի օգտագործում COICOP դասակարգումը ուստի բավականին շատ ֆիզիկական աշխատանք է պահանջվում ԿԱՀ տվյալները ՀԱԳԻ կշիռների համար կիրառելի դարձնելու համար: Քննարկվում է Գների բաժնի և ՏՏՀ բաժինների կողմից, թե ինչպես կարելի է լուծել այս խնդիրը: Առաջարկվում է ՏՏՀ բաժնին կիրառել COICOP ՀԱԳԻ դասակարգումը իրենց աշխատանքներում:

- Տարածքային կշիռները արդեն համապատասխան են ՀԱԳԻ Կանոնակարգի պահանջներին այսիքն չպետք է ունենան ավելի քան 7 տարվա վաղեմություն:

Ընտրանք

- ՀՍԳԻ 1749/1996 Կանոնակարգի համաձայն, նոր ապրանքները պետք է հնարավորինս արագ ընդգրկվեն ընտրանքում: Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն նոր ապրանքների երկու դեպքեր՝ արդեն իսկ առկա ապրանքի նոր տեսակը և ամբողջությամբ նոր ապրանք/ծառայություն: Եթե ապրանքը դուրս է գալիս ընտրանքից (այլևս չի վաճառվում), ապա հնարավորինս շուտ պետք է ընտրվի այդ ապրանքի նոր տեսակը և պետք է իրականացվեն որակի ճշգրտումներ: Ինչ վերաբերվում է ամբողջությամբ նոր ապրանքատեսակին (օրինակ՝ ինտերնետային կապ), դրանք նույնպես պետք է հնարավորինս արագ ընդգրկվեն, եթե նշանակալի ազդեցություն են ունենում: Այս առումով առաջարկվող լուծումն այն է, որ ընտրանքը արդիականացվի ամեն տարին մեկ անգամ, երբ ներկայացվում են նոր կշիռներ:

- Հայաստանի ՍԳԻ –ում առկա են 470 էլեմենտար ագրեգատներ և սա հավանաբար բավական է ապահովելու համար բավարար էլեմենտար ագրեգատներ՝ COICOP –ի յուրաքանչյուր կատեգորիայի ապրանքների տեսականին ներկայացնելու համար:
  Սակայն, էլեմենտար ագրեգատների ապրանքների քանակը և էլեմենտար ագրեգատների քանակը COICOP –ի յուրաքանչյուր կատեգորիայի համար պետք է ուսումնասիրվի և քննարկվի՝ պարզելու համար արդյոք սպառողական ոլորտի ապրանքների տեսականին պատշաճ ներկայացված է ընտրանքում և գնահատելու համար, թե արդյոք ՀՍԳԻ 1749/1996 Կանոնակարգի հատուկ պահանջները ընտրանքի առումով բավարարված են:

- Անհրաժեշտ է վերլուծել, թե արդյոք հնարավոր է օպտիմալացնել ընտրանքը (չափը): Առաջարկվում է վերլուծել թե ինչպիսի հետևանքների կհանգեցնի եթե գների հավաքագրումը հանվի յուրաքանչյուր ամսվա 1-ից՝ որպեսզի խնայել ռեսուրսները և նպատակաուղղել դրանք այլ առաջադրանքներ իրականացնելու համար: Նույն կերպ պետք է ուսումնասիրվի, թե արդյոք առավել նպաստավոր կլինի, եթե որոշ ապրանքատեսակների համար հավաքվեն ավելի շատ գներ և ավելի քիչ գնային տվյալներ այլ ապրանքատեսակների համար:

- ՀՍԳԻ ապրանքների և ծառայությունների ընտրանքը պետք է ընդգրկի ամբողջ բնակչության ծախսերը, ներառյալ՝ Հայաստանում բնակվող օտարերկրացիների ծախսերը: Ուստի ինչպես թանկարժեք ապրանքները, այնպես էլ մատչելի ապրանքները պետք է ներառված լինեն ընտրանքում, այնքանով որքանով դրանք նշանակալի ազդեցություն ունեն: Անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյոք ավելի շատ բարձրակարգ ապրանքներ և ծառայություններ պետք է ներառել Հայաստանի ՀՍԳԻ մեջ:

Ժամկետները

- Համապատասխանում է

Սպառողական որոշակի ոլորտների հատուկ Կանոնակարգերը

- Հայաստանի ՍԳԻ մեջ սեզոնային ապրանքների գները հաշվարկվում են ոչ-սեզոնային ժամանակահատվածում՝ օգտագործելով համապատասխան ապրանքային խմբի գնային զարգացումները: Գնահատումը տեղի է ունենում տվյալ տարածաշրջանի տվյալ ապրանքի միջին գնային մակարդակով: Բավականին բարձր գները, որոնցով ապրանքը նոր մուտք է գործում սեզոնային շուկա հաշվի չեն առնվում, քանի որ դրանք ներկայացուցչական չեն: Ուստի ապրանքները սեզոնում դիտարկվում են այն ժամանակ, երբ գները այն մակարդակում են, երբ տեղի է ունենում զգալի ծավալի առևտուր: Քանի որ ՀՍԳԻ սեզոնային ապրանքների վորաբերյալ 330/2009 Կանոնակարգում նշվում է, որ ոչ-սեզոնային ապրանքների գների հաշվարկը պետք է իրականացվի անհատական գների դիտարկման մակարդակում, ապա անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյոք գնահատումը միջին գնային մակարդակում համադրելի մեթոդ է թե ոչ: Ակնկալվում է վերջինիս ուսումնասիրությունը:

- Ապահովագրության կշիռը պետք է լինի հայցերի զուտ կշիռը, որը հետ է վճարվել տնային տնտեսության ոլորտին: Անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպես պետք է այս կշիռը հաշվարկվի Հայաստանում ավտոմեքենաների ապահովագրության համար և այնուհետև ուսումնասիրել, թե արդյոք ավտոմեքենաների ապահովագրությունը նշանակալի է թե ոչ, ելնելով ՀՍԳԻ սահմանումից, համաձայն որի, այն պետք է կազմի ընդհանուր սպառողական ծախսերի 1/1000 որպեսզի ընդգրկված լինի ՀՍԳԻ մեջ:

- ՀՍԳԻ 1687/98 Կանոնակարգի համաձայն, երբ ապրանքները և ծառայությունները սպառողներին են տրվում անվճար, ապա զանձվում է փաստացի արժեքը, հետևաբար փոփոխությունը զրոից մինչև փաստացի գինը, և հակառակը, պետք է հաշվի առնել ՀՍԳԻ մեջ: Սա Հայաստանի դեպքում վերաբերվում է օրինակ բժշկական ծառայություններին, որոնք տրամադրվել են որոշ սպառողներին անվճար՝ ելնելով իրենց եկամուտի չափից: Երբ հետևաբար այդ սպառողներից ոմանցից պահանջվի վճարել զրոյից մինչև ընդհանուր գնի աճի համար, սա պետք է հաշվի առնվի:

  Որպես օրինակ կարելի է բերել հետևյալը՝ (տես ներքևում) բժշկական ծառայությունը արժի 1000 ՀՀ դրամ և նախորդ ամսում և ընթացիկ ամսում: Նախորդ ամսում պետությունը վճարել է բոլոր այն տնային տնտեսությունների բժշկական ծառայությունների համար, որոնց եկամուտը ցածր է 200.000 ՀՀ դրամից: Ընթացիկ ամսում պետությունը վճարում է միայն այն տնային տնտեսությունների համար, որոնց եկամուտը ցածր է 100.000 ՀՀ դրամից: Հետևաբար, այն տնային տնտեսությունները, որոնց եկամուտը տատանվում է 100.000 ից մինչև 200.000 ՀՀ դրամի սահմաններում, ունեցել են գների աճ, չնայած որ 1000 դրամի արժեքը չի փոփոխվել: Գնային ինդեքսը

հաշվարկվել է որպես կշռված միջին գնային զարգացում, որը մատուցվել է ծառայության դիմաց:

| Եկամուտի մակարդակը | Տնային տնտեսության քանակը | Նախորդ ամսվա արժեքը | Ընթացիկ ամսվա արժեքը |
|---|---|---|---|
| 0 - 100.000 | 5000 | 0 | 0 |
| 100.000 - 200.000 | 4000 | 0 | 1000 |
| 200.000 - 300.000 | 3000 | 1000 | 1000 |
| 400.000 - | 3000 | 1000 | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| **Ինդեքս** | | **100** | **166,7** |

Գների փոփոխությունները, որոնք կապված են պետության կողմից սուբսիդավորման փոփոխությունների հետ, պետք է ներառված լինեն ՀՍԳԻ մեջ: Զգալի դժվարություններ են ակնկալվում այս գնային փոփոխությունները ինդեքսի մեջ ներառելու հետ կապված, նաև հաշվի առնելով ռեսուրսների սղությունը:

# 3. Եզրակացությունների և առաջարկներ

## 3.1 Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման հետ կապված սահմանափակումները

Հայաստանի ՍԳԻ հետ կապված բոլոր մեթոդաբանական աշխատանքները իրականացվում են ՀՀ ԱՎԾ-ի Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի աշխատակիցների կողմից: ՍԳԻ աշխատանքներով զբաղվում են երկու լրիվ դրույքաչափով աշխատող աշխատակիցներ: Սա իսկապես շատ սահմանափակ թիվ է՝ հաշվի առնելով հսկայածավալ աշխատանքը:

Տեխնոլոգիական աջակցությունը սահմանափակված է միայն համակարգիչների աշխատանքով և ծրագրային ապահովմամբ՝ Microsoft EXCEL –ով հաշվարկներ կատարելու համար:

Սուղ մարդկային և ՏՏ ռեսուրսների համադրությունը անհնարին է դարձնում ազգային ՍԳԻ և ՀՍԳԻ միաժամանակյա կազմումը: Սա նաև վտանգ է հադիսանում ՀՍԳԻ պահանջները բավարարելու առումով սույն Թվինինգ ծրագրի ժամկետների շրջանակներում մասնավորապես ինչպես նաև ընդհանուր առմամբ հեռահար ժամկետներում նույնպես:

Սույն Թվինինգ ծրագրի մեծ ջանքերի շնորհիվ Բաղադրիչ Ե պետք է նվիրված լինի արտադրական համակարգերի օպտիմալացմանը և աշխատանքային գործընթացներին:

Քանի որ սա առավել հասանելի եղանակն է հատկացնելու անհրաժեշտ ռեսուրսներ ՀՍԳԻ կազմելու համար:

Գների հավաքագրումը տեղի է ունենում Հայաստանի վիճակագրական տարածքային գրասենյակներում և ահա այստեղ խիստ զգացվում է ՏՏ սղությունը: Երևանի տարածքային գրասենյակում 5 գնադիտարկողներ իրենց աշխատանքի ընթացքում միմյանց մեջ կիսում են մեկ համակարգիչը: Արդյունքում պարբերաբար առաջանում են ուշացումներ կենտրոնական գրասենյակին գների տրամադրման հետ կապված և հետևաբար ավելացնում ճնշումը առանց այն էլ այն սուղ ռեսուրսների վրա, որոնք կազմում են ինդեքսները: Նմանատիպ իրավիճակ է նաև Հայաստանի այլ շրջաններում կամ նույնիսկ ավելի վատ:

Սուղ ռեսուրսների տեսակետից ահրաժեշտ է նաև հստակեցնել հաղորդակցությունը սպառողների հետ և ներկայացնել Հայաստանի ՍԳԻ և ՀՍԳԻ շրջանակների նմանությունները՝ առաջարկելով արտադրել երկու ինդեքսներից միայն մեկը, և դա կլինի ՀՍԳԻ-ը: Քաղաքական տեսակետից այս առաջարկությունը պետք է քննարկվի ՀՀ ԱՎԾ-ում և պետք է որոշում կայացվի սույն Թվինինգ ծրագրի ընթացքում կամ դրա ավարտից հետո:

ԾԵ Գների բաժնի փորձագետների և ԱՊ Գների փորձագետների համատեղ համագործակցության արդյունքում սույն առաքելության գնահատման շրջանակներում կազմվեց աշխատանքային ծրագիր, որն ուղված է Հայաստանում հնարավորինս լավագույն ՀՍԳԻ ներդրմանը:

Հիմնական այն ոլորտները, որոնց շուրջ անհրաժեշտ է աշխատել սույն ծրագրի ընթացքում հետևյալն են՝ Ընտրանք, Որակի ճշգրտումներ և Կշիռներ: Սակայն կան նաև այլ ոլորտներ, որոնց նույնպես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել:

Աշխատանքային ծրագիրը ներկայացված է Հավելված 6 –ում:

Առաջարկվում է ամբողջ ծրագրի ընթացքում աշխատել ՀՍԳԻ բնութագրերի ներկայացման վրա՝ համեմատելով դրանք ՍԳԻ հետ: Տարբերությունների համար պետք է տրամադրել անհրաժեշտ բացատրություններ և ներկայացնել ՀՍԳԻ ներդրման պատճառները: Այս առաջարկությունը տրվել է՝ հաշվի առնելով ԵՄ երկրների փորձը, որտեղ տարբեր առիթներով հարցականի տակ էր դրվել վստահությունը ՀՍԳԻ հանդեպ և դրա հետևանքով բավականին մեծ ուշադրություն էր դարձվում հաղորդակցման հարցերի վրա:

## *3.2 Գործողություններ, որոնք անհրաժեշտ է իրականացնել մինչև հաջորդ առաքելությունը*

<u>Առաջադրանքներ, որոնք պետք է իրականացվեն և պատրաստվեն.</u>

*Գործունեություն Ե3: Տեխնիկական մեթոդաբանության մշակում 5-9 Սեպտեմբեր, 2011*

- Իրականացնել տարբեր վերլուծություններ կապված գնային հավաքագրումը յուրաքանչյուր ամսվա սկզբից ամբողջապես հանելու ազդեցության հետ: Արդյունքները պատրաստել և ներկայացնել քննարկման:
  *Եթե գրավոր նյութեր են, ապա թարգմանել դրանք անգլերեն լեզվով:*

- Նկարագրել և հաշվի առնել այն բոլոր կազմակերպչական փոփոխությունները, որոնք պետք է իրականացվեն, եթե փոփոխվի գների հավաքագրման ժամանակացույցը և մեթոդաբանությունը:
  *Եթե գրավոր նյութեր են, ապա թարգմանել դրանք անգլերեն լեզվով:*

- Պատրաստել քննարկման նյութեր, թե ինչպես պետք է իրականացվի ընտրանքի տարեկան արդիականացումը, ներառյալ գնադիտարկողների մասնակցությունը ներկայացուցչական ապրանքների գնահատման համար:
  *Եթե գրավոր նյութեր են, ապա թարգմանել դրանք անգլերեն:*

- Պատրաստել նյութեր, 901 անվանական ապրանքները բաշխելով 470 էլեմենտար ագրեգատների վրա և կապակցել 470 կատեգորիաները COICOP –ին (ներկայիս COICOP-ին, քանի որ դուք դեռևս չունեք COICOP ՀԱԳԻ համար):
  *Նախընտրելի է ունենալ գրավոր նյութեր և թարգմանել դրանք անգլերեն:*

- Պատրաստել նյութեր սպառողական հատուկ ոլորտների համար որակի ճշգրտումների Հայաստանի մեթոդների վերաբերյալ:
  *Եթե գրավոր նյութեր են, ապա թարգմանել դրանք անգլերեն:*

- Ներկայացնել ՏՏՀ բաժնի կողմից COICOP ՀԱԳԻ կիրառման կարգավիճակը մինչև 2011 թվականի ավարտը:

- COICOP –ից ՀԱԳԻ COICOP –ի անցման կարգավիճակը:

## *3.3 Թվինինգ ծրագրի ավարտից հետո*

ՀԱԳԻ ղեկավարող կանոնակարգերը շարունակվում են զարգանալ և համալրվել: Այս առումով, մտահոգիչ է, թե ինչպես պետք է ապահովել ՀԱԳԻ մեթոդաբանության հետ համապատասխանությունը սույն Թվինինգ ծրագրի ավարտից հետո:

## Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ Ծրագրի միջոցով
AM09/ENP-PCA/TP/04

## Նախագիծ Տեխնիկական Առաջադրանք (Ե1 + Ե2), Ապրիլի 4-14, 2011

| | |
|---|---|
| Բաղադրիչ Ա | Որակի կառավարում |
| Բաղադրիչ Բ | Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպենդենտների Ծանրաբեռնվածություն |
| Բաղադրիչ Գ | ՀՆԱ –ի ամբողջականության բարելավում |
| Բաղադրիչ Դ | Գյուղատնտեսության համատարած հաշվառում |
| *Բաղադրիչ Ե* | *Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս* |
| Բաղադրիչ Զ | ՏՀՏ Հանրություն |

*Գործունեություն Ե 1 – 2   Հարցերի սահմանում/այլընտրանքների որոշում*

**1. Գործունեության նպատակը**

Գործունեության նպատակները հետևյալն են `

- Ներկայացնել և քննարկել ՀՍԳԻ ի վերաբերյալ ԵՄ կանոնակարգերը
- Ստանալ մեթոդաբանության ընդհանուր նկարագիրը և աշխատանքային մեթոդները ՍԳԻ – ի վերաբերյալ, որոնք ներկայումս հաշվարկվում են Հայաստանի համար
- Բացահայտել Հայաստանում ներկայիս գործող ՍԳԻ և ՀՍԳԻ հիմնական տարբերությունները
- Որոշել ՀՍԳԻ –ի այն ոլորտները, որտեղ զարգացումը առավել անհրաժեշտ է, այսինքն որտեղ զարգացման առավելությունները ավելի նշանակալից կլինինեն` ներդրված միջոցների հետ համեմատած
- Որոշել մեթոդաբանության հնարավոր սահմանափակումները, որոնք վերաբերվում են ՀՍԳԻ –ի ներդրմանը
- Որոշել ՏՏ և ընթացակարգերին առնչվող հնարավոր այն խնդիրները, որոնք կապված են ՀՍԳԻ –ի ներդրման հետ
- Ներգրավել համապատասխան արտաքին շահառուներին քննարկման գործընթացում

**2. Գործողության ակնկալվող արդյունքները**
Գործողության ակնկալվող արդյունքները հետևյալն են՝

- ՍԳԻ և ՀՍԳԻ տարբերությունների ընդհանուր նկարագիրը
- Փոփոխությունների այն առաջնային ցանկը, որն անհրաժեշտ է Հայաստանում ՀՍԳԻ ստացման համար՝ համեմատելով ներկայիս ՍԳԻ ի հետ
- Առավելագույն հասանելի ՀՍԳԻ աշխատանքային ծրագիր
- Հաջորդ գործունեության աշխատանքային ծրագրի մշակում (E3)
- Հաջորդ գործունեության նախընտրելի ժամանակի որոշում (E3)

**3. Նախագծի մասնակիցները**

Պրն. Գագիկ Գեվորգյան, Վիճակագրության Խորհրդի անդամ, (ՇԵ Բաղադրիչի ղեկավար)
Պրն. Գուրգեն Մարտիրոսյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Մարիամ Երիցյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի գլխավոր մասնագետ

Քիրստեն Բալլինգ, Դանիայի Վիճակագրության Գների և սպառման բաժնի պետ (ԱՊ Բաղադրիչի ղեկավար)
Մարտին Բիրգեր Լարսեն, Դանիայի Վիճակագրության Գների և սպառման բաժնի Գլխավոր խորհրդատու

*Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը*

Հայաստանի Կենտրոնական Բանկ, Ֆինանսների Նախարարություն, Էկոնոմիկայի Նախարարություն, միջազգային կազմակերպություններ

## Հավելված 2 Առաքելության ծրագիրը

| Ժամը | Վայրը | Միջոցառումը | Նպատակը/մանրամասները |
|---|---|---|---|
| **4 Ապրիլի, երկուշաբթի առավոտյան** | Կոնգրես Հյուրանոց | Հանդիպում ԹՄԽ-ի հետ | Քննարկել առաքելության ծրագիրը |
| **4 Ապրիլի, երկուշաբթի կեսօրին** | ՀՀ ԱՎԾ | Հանդիպում ԾԵ փորձագետների հետ | ԾԵ փորձագետների կողմից տրված ընդհանուր նկարագիրը: Առկա ՍԳԻ մեթոդաբանություն: Վերջին և շարունակական զարգացումները: |
| **5 Ապրիլի, երեքշաբթի** | ՀՀ ԱՎԾ | Հանդիպում ԾԵ փորձագետների հետ | ՏՏ հիմնավորում և առկա ՀՆԱ –ի աշխատանքային ընթացքը: Որոնք են ներկայիս համակարգի առավել ուժեղ և թույլ կողմերը: |
| **6 Ապրիլի, չորեքշաբթի** | ՀՀ ԱՎԾ | **<u>Առավոտյան</u>**<br>Սեմինար արտաքին շահառուների համար<br>**<u>Կեսօրին</u>**<br>Հանդիպում ԾԵ փորձագետների հետ | ՀՍԳԻ կանոնակարգի առավել կարևոր ոլորտների ներկայացում: ԵՄ անդամ պետությունների փորձի քննարկում և ՀՍԳԻ ներկայացում: |
| **7 Ապրիլի, հինգշաբթի** | ՀՀ ԱՎԾ | Հանդիպում ԾԵ փորձագետների հետ | Դանիայի ՀՍԳԻ –ի մեթոդների ներկայացում: Փորձի փոխանակում և ՀՍԳԻ մեթոդաբանության փոխադարձ ըմբռնումը գործնականում |
| **8 Ապրիլի, Ուրբաթ Առավոտյան** | ՀՀ ԱՎԾ | Հանդիպում ԾԵ փորձագետների հետ | Հայաստանի ՍԳԻ արտադրման համակարգի մանրամասն ուսումնասիրում Հայաստանում ՀՍԳԻ մշակման հիմնական առաջնահերթությունների քննարկում: Որոնք են առավել կարևոր ոլորտները և պակաս կարևոր ոլորտները: Արդյոք ՀՍԳԻ փոխարինելու է թե լրացնելու է Հայաստանի գործող ՍԳԻ-ին: |
| **8 Ապրիլի, Ուրբաթ կեսօրին** | Այցելություն Երևանի տարածքային գրասենյակ | Հանդիպում ԾԵ Երևանի գնադիտարկողների հետ | Երևանում գների հավաքագրման աշխատանքային գործընթացի ներկայացում: Ինչպես է իրականացվում բացակայող գների և ապրանքների փոխարինումը և ինչպես է կազմակերպված գների հավաքագրումը: |
| **11 Ապրիլի, երկուշաբթի** | Այցելություն Արարատի տարածքային գրասենյակ | Հանդիպում Արարատի գնադիտարկողների հետ | Որոշել գների հավաքագրման կազմակերպման տարբերությունները տարբեր շրջանների միջև: |
| **12 Ապրիլի, Հինգշաբթի** | ՀՀ ԱՎԾ | **<u>Առավոտյան</u>**<br>Հանդիպում ԾԵ ՏՏՀ փորձագետների հետ<br><br>**<u>Կեսօրին</u>**<br>Հանդիպում ԾԵ փորձագետների հետ | Հիմնական տվյալների աղբյուրների քննարկումը ՍԳԻ/ՀՍԳԻ կշիռների արտադրման համար: Որոշել այն հնարավոր ուղիները, որոնք կնպաստեն կշիռների արտադրման գործընթացին:<br>ԱՊ փորձագետների նախնական առաջարկները՝ քննարկումներ և եզրակացությունների հնարավոր ճշգրտումներ: |

| | | | |
|---|---|---|---|
| **13 Ապրլի, չորեքշաբթի** | ՀՀ ԱՎԾ | **Առավոտյան**<br>Հանդիպում ՇԵ փորձագետների հետ<br>**Կեսօրին**<br>Բրիֆինգ ՇԵ ծրագրի ղեկավարի հետ | ՀՍԳԻ ներկայացման աշխատանքային ծրագրի նախագծի քննարկում<br><br>Արդյունքների ներկայացում |
| **14 Ապրիլի, հինգշաբթի** | ՀՀ ԱՎԾ | Հանդիպում ՇԵ փորձագետների հետ | ՀՍԳԻ ներկայացման աշխատանքային ծրագրի նախագծի քննարկում: Եզրակացություններ և առաջարկներ: Հաջորդ այցելության հետևանքների որոշում և ՇԵ փորձագետների համար կիրառելի աշխատանքային ծրագիր: |

**Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել;**

Պրն. Գագիկ Գեվորգյան, Վիճակագրության Խորհրդի անդամ, (ՇԵ Բաղադրիչի ղեկավար)
Պրն. Գուրգեն Մարտիրոսյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Մարիամ Երիցյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի գլխավոր մասնագետ

Գայանե Պետրոսյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի գլխավոր մասնագետ
Կարինե Ավետիսյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի առաջատար մասնագետ
Հասմիկ Կարապետյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի 1 ին կարգի մասնագետ
Ջոհրապ Ազիզյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի 1 ին կարգի մասնագետ
Լուսյա Երմոյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի վիճակագիր
Լիդա Գրիգորյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի վիճակագիր

Լևոն Դավթյան, Արարատի մարզային գործակալության ղեկավար, ՀՀ ԱՎԾ
Վրեժ Ավետիսյան, Երևանի գործակալության ղեկավար, ՀՀ ԱՎԾ
Հովհաննես Հայրապետյան, Երևանի առևտրի և գների վիճակագրության ղեկավար, ՀՀ ԱՎԾ

Ռուզաննա Ռուբենյան, գնադիտարկող, Երևան
Արփինե Մխիթարյան, գնադիտարկող, Երևան
Հասմիկ Ապրեսյան, գնադիտարկող, Երևան
Նարինե Աղավելյան, գնադիտարկող, Երևան
Ալեքսանդր Գրիգորյան, գնադիտարկող, Արտաշատ
Հովիկ Եգոյան, գնադիտարկող, Արտաշատ

**Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը**
ՀՀ Կենտրոնական բանկ
ՀՀ Ֆինանսների Նախարարություն
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն,
Թվինգ ծրագիր
ԱՄՀ

**Սեմինարի մասնակիցներ**

**Արտաքին շահառուներ**

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Արտակ Չիլիկարյան
ՀՀ Ֆինանսների նախարարություն, Լիլի Կարապետյան
ՀՀ Ֆինանսների նախարարություն, Լիանա Հարությունյան
ՀՀ Ֆինանսների նախարարություն, Արմենուհի Ծաղիկյան
ՀՀ Կենտրոնական բանկ, Աշոտ Պետրոսյան
ՀՀ Կենտրոնական բանկ, Մարտին Գալստյան
ԱՄՀ Աիկո Մինեշիմա
Թվինինգ ծրագիր, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձանժողով, Նելլի Սարգսյան

**ՀՀ ԱՎԾ –ի աշխատակիցներ՝**

ՀՀ ԱՎԾ ՎՊԽ-ի անդամներ
ՀՀ ԱՎԾ Վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին
ՀՀ ԱՎԾ Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
ՀՀ ԱՎԾ Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
ՀՀ ԱՎԾ Ֆինանսների վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Առևտրի և այլ ծառայությունների բաժին
ՀՀ ԱՎԾ Տրանսսպորտի և կապի վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Աշխատանքի վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Տնային տնտեսությունների հետազոտության բաժին

## Հավելված 4: Հայաստանի ՍԳԻ (հիմնված է IMF SDDS և սեփական եզրակացությունների վրա)

**Հասկացություններ և սահմանումներ**

ՍԳԻ դա շուկայական զամբյուղի ֆիքսված ապրանքների և ծառայությունների զուտ գնային փոփոխությունների չափման միջոց է մշտական քանակությամբ և որակով՝ ընդհանուր բնակչության համար:

**Շրջանակը**

*Բնակչության ընդգրկումը* ՝ տնային տնտեսությունների բոլոր տեսակները անկախ իրենց եկամուտի չափից:

*Աշխարհագրական ընդգրկումը* ՝ դիտարկումները ընդգրկում են Հայաստանի Հանրապետության 11 խոշոր բնակչության կենտրոններ (շրջաններ) և մայրաքաղաք Երևանը:

*Ապրանքների ընդգրկումը*՝ 470 ապրանքներ և ծառայություններ (901 ներկայացուցչական), որոնցից 377 –ը սպառողական ապրանքներ են (158 պարենային և 219 ոչ-պարենային) և 93 –ը ծառայություններ են: Ներառված են ինչպես տեղական արտադրության, այնպես էլ ներմուծված ապրանքներ:

*Ընդգրկման բացառությունները* ՝ ոչ ֆինանսական ծախսերը, սեփական սպառման համար նախատեսված ապրանքները և ծառայությունները, ինչպես նաև երկարատև օգտագործված ապրանքները ներառված չեն: COICOP –ի հետևյալ խմբերը նույնպես ներառված չեն՝ 12.2 խումբ (մարմնավաճառություն) 12.4 (սոցիալական ապահովություն) և 12.5 (ապահովագրություն):

**Դասակարգում**

Կիրառված է անհատական սպառման վիճակագրական դասակարգման ազգային տարբերակը, որը համապատասխանում է միայն COICOP-ին 9 բաժիններին:

**Գները**

*Գների տեսակները* ՝ Գործարքի արժեքը, որը փաստացի վճարվել է սպառողի կողմից, ներառյալ հարկերը, ինչպիսիք են օրինակ Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ): Գները գրանցվում են յուրաքանչյուր ամիս երեք անգամ, հաշվետու ամսվա 1- ին, 10- րդ և 20- րդ օրերին մոտ:

**Տվյալների աղբյուրները և գների հավաքագրման մեթոդները**

*Կշիռների աղբյուրները*՝ Ապրանքների և ծառայությունների կշիռները, որոնք օգտագործվում են ինդեքսների ագրեգացման համար, հաշվարկվում են 2010 թվականի Տնային տնտեսությունների բյուջեի հետազոտության հիման վրա, որտեղ ընդգրկված են

մոտավորապես 8000 տնային տնտեսություններ: Այս կշիռները կիրառվել են 2011 թվականի մարտին և ինդեքսների վերահաշվարկը տեղի է ունեցել մինչև 2011 հունվարը:

*Ապրանքի ընտրությունը*՝ գործընթացը ըստ որի ընտրվում են 470 ապրանքներ և ծառայություններ (901 ներկայացուցչական) իրականացվում է տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հիման վրա այն բոլոր լայն սպառման ապրանքների և ծառայությունների համար, որոնք տրամադրվում են բնակչությանը, ինչպես նաև հիմնված են պարբերական հետազոտությունների վրա առևտրի և ծառայությունների կետերում: Գնադիտարկողների հետ քննարկվում է թե ինչպես պետք է կատարվի ապրանքի ընտրությունը:

*Առևտրի կետերի ընտրությունը*՝ դիտարկման միավորները ընտրվում են ապրանքների և ծառայությունների շրջանառության ծավալի հիման վրա, որոնք տրամադրվում են այլ վիճակագրական միավորների կողմից: Գնադիտարկողների հետ քննարկվում է, թե ինչպես պետք է իրականացվի առևտրի կետերի ընտրությունը:

*Ընտրանքի չափը*՝յուրաքանչյուր ապրանքի համար գները ուսումնասիրվում են 5-12 նախապես ընտրված առևտրային և ծառայությունների կազմակերպություններում յուրաքանչյուր 12 շրջաններում: Ընդհանուր թվով Հայաստանում մոտավորապես 2655 տարբեր առևտրի կետեր են ուսումնասիրվում յուրաքանչյուր ամսում: Մոտավորապես 250,000 գների տվյալներ են գրանցվում և վերլուծվում յուրաքանչյուր ամսում: Քանի որ յուրաքանչյուր ապրանք/ծառայություն յուրաքանչյուր շրջանում և առևտրի կետում ուսումնասիրվում է ամսվա մեջ երեք անգամ, ապա ընդհանուր առմամբ մոտավորապես 250.000/3 =83.333 անվանական ապրանքներ են ուսումնասիրվում յուրաքանչյուր ամսում:

*Գների հավաքագրման մեթոդները*՝ տվյալները հիմնականում գրանցվում են գնադիտարկողների կողմից թղթային հարցաթերթիկի տարբերակով՝ այցելելով ընտրված մանրածախ առևտրի կետերը, որից հետո դիտարկումները մուտքագրվում են աղյուսակներում: Լրացված աղյուսակները փոխանցվում են ՀՀ ԱՎԾ –ին էլեկտրոնային փոստի միջոցով: Այն սակագները (որոնք միևնույնն են ամբողջ հանրապետության համար) ինչպիսիք են օրինակ կապը, էլեկտրաէներգիան, գազը և այլն, անմիջապես գրանցվում են կենտրոնական գրասենյակում:

Վարձավճարները հավաքագրվում են գնադիտարկողների կողմից բնակարանի ընտրանքի միջոցով: Ընտրանքը բաղկացած է 1 ննջասենյակ և 2 ննջասենյակ ունեցող բնակարաններից յուրաքանչյուր շրջանի համար: Այն բնակարանները, որոնք ընտրված են ընտրանքում նախապես որոշվել են՝ հաշվի առնելով տարբեր որակական չափանիշներ (բնակարանային պայմանները, գտնվելու վայրը և այլն): Եթե բնակարանը վերանորոգված է և չի ներառված ընտրանքի շրջանակում, ապա այդ դեպքում ընտրվում է նոր բնակարան, որը համապատասխանում է ընտրված ապրանքային բնութագրերին: Մեծ բնակարանները և սեփական տները ընդգրկված չեն ընտրանքում:

**Ապրանքի/արտադրանքի դասակարգում**

Ապրանքների և ծառայությունների խումբը համապատասխան սահմանումներով պատրաստվել է ՀՀ ԱՎԾ-ի Գների Վիճակագրության և միջազգային համադրությունների բաժնի աշխատակիցների կողմից և միևնույն ապրանքները և ծառայությունները կիրառվում են բոլոր շրջաններում գների գրանցման համար: Յուրաքանչյուր ապրանքի համար տրված է այնպիսի մանրամասն նկարագիր, ինչպիսիք են օրինակ արտադրման

երկիրը, ապրանքի որակական ցուցանիշները, չափման միավորը և այլն: Ապրանքներից և ծառայություններից շատերի համար առարկայի ազատ բնութագրերը համապատասխան հրահանգներով տրամադրվում են գնադիտարկողներին՝ ընտրելու համար առավել հայտնի տեսականին: Գնադիտարկողը պետք է ընտրի ամենատարածված տեսակը և նշի լրացուցիչ բնութագրերը (գույնը, բաղադրությունը, բրենդը, մոդելը և այլն): Գների հավաքագրումը իրականացվում է ամսեկան 3 անգամ և տրամադրվում է կենտրոնական գրասենյակին ամիսը երեք անգամ՝ դրանք աղյուսակներում տեղադրելուց հետո: Ամբողջական տվյալները ամբողջ ամսվա կտրվածքով ուղարկվում են մինչև ընթացիկ ամսվա 23 րդ օրը:

**Կշիռների գնահատում ըստ ՏՏՀ տվյալների**

Որոշ ապրանքների և խմբերի համար, ինչպիսիք են օրինակ ոգելից խմիչքները, ծխախոտը, բջջային կապը, կշիռները չեն հաշվարկվում միայն ՏՏՀ տվյալներով, այլ նաև գնահատվում են՝ օգտագործելով բիզնես վիճակագրության բաժինների կողմից տրամադրված շրջանառության վերաբերյալ տվյալները:

**Վիճակագրական մեթոդները բացակայող գների, սեզոնային ապրանքների համար և այլն**

*Բացակայող գների մշակումը* ՝ բացակայող ապրանքների դեպքում օգտագործվում է գնային փոփոխությունը համապատասխան ապրանքի համար ՝ *բացակայող գինը գնահատելու համար:*

*Փոխարինող ապրանքի ընտրությունը* ՝ երբ մշտապես բացակայում է տեսականին, ապա այն փոխարինվում է մեկ այլ նմանատիպ տեսականիով միանման պարամետրերով և հատկանիշներով: Փոխարինումը տեղի է ունենում սովորաբար տարեկան 1-2 անգամ: Ապրանքի փոխարինումը հնարավորինս իրականացվում է բազիսային տարում:

*Որակական տարբերությունների ճշգրտումներ* ՝ ճշգրտումները հիմնականում իրականացվում են կիրառելով համընկնման մեթոդը: Որոշ դեպքերում կիրառվում է անմիջական համադրումների մեթոդը:

*Ամբողջովին նոր արտադրանքի ներկայացումը* ՝ նոր արտադրանքը չի ներկայացվում ապրանքի կառուցվածքում մինչև հաջորդ կշիռի արդիականացումը:

*Սեզոնային ապրանքներ* ՝ սեզոնային գների ճշգրտման մեթոդները իրականացվում են հիմնվելով վերջին իրական միջին գնի աճի վրա՝ ըստ տրված խմբի կամ ենթախմբի համապատասխան ինդեքսների զարգացման: Ամսվա միջին գինը, երբ կրկին հայտնվում է տվյալ ապրանքը համեմատվում է անմիջականորեն այդ ապրանքի նախորդ ամսվա գնահատված արժեքի հետ: Սեզոնային ճշգրտումները չեն իրականացվում անհատական գների դիտարկման մակարդակով, այլ դրանք իրականացվում են երկրաչափական միջին գնային մակարդակով տվյալ ապրանքի համար այդ շրջանում:

*Սեփականատիրոջ կողմից զբաղեցված բնակարաններ*՝ որևէ հաշվառում չի իրականացվում սեփականատիրոջ կողմից զբաղեցված բնակարանների վերաբերյալ և այն ներառված չէ ՍԳԻ մեջ:

**Այլ վիճակագրական ընթացակարգերը, կիրառված ինդեքսի բանաձևերը և այլն**

*Ընթացիկ կշիռների ժամանկետները.* 2010
*Կշիռների արդիականացման հաճախականությունը.* յուրաքանչյուր 5 տարին մեկ:

*Ամենացածր մակարդակի ինդեքսների հաշվարկը* ՝ ամենացածր մակարդակի ինդեքսները (յուրաքանչյուր ապրանքի համար) հաշվարկվում են որպես միջին երկրաչափական գների հարաբերակցություն, որը գրանցվել է յուրաքանչյուր ապրանքի համար հաշվետու ժամանակատավածի և բազիսային ժամանակահատվածի համար: Ֆիզիկապես ստուգվում է, թե արդյոք անհատական գնային դիտարկումները միևնույն քանակով միևնույն առևտրի կետերից միանգամայն նույնն են ընթացիկ ամսում, ինչպես դրանք եղել են նախորդ ամսում երկրաչափական միջին գների մակարդակից ցածր գների համար մեկ շրջանում տվյալ ապրանքի համար: Սա երաշխավորում է, որ միայն համապատասխանող գները ներառված լինեն հաշվարկներում:

*Ագրեգացում* ՝ Լասփեյրեսի ձևափոխված բանաձևը ֆիքսված կշիռներով օգտագործվում է էլեմենտար ինդեքսների ագրեգացման համար՝ ըստ ապրանքային խմբերի և շրջանների ինդեքսների ամբողջ Հայաստանի Հանրապետության համար:

*Ծախսերի և բազիսային ժամանակաշրջանի դասավորությունը* ՝ կշիռները որոնք հիմնված են ՏՏԲՀ վրա գների առումով ճշգրտված են այնպես, որ դրանք ներառում են ողջ օրացուցային տարին (ներկայումս 2010):

*Վերակշռված ինդեքսների կապակցումը պատմական ինդեքսների հետ*՝ նոր վերակշռված ինդեքսները կապակցվում են պատմականի հետ:

*Հաշվետու ժամանակաշրջան*՝ Ինդեքսների հաշվետու ժամանակաշրջանն է՝ 2010=100:

Սեզոնային ճշգրտված ինդեքսներ՝ որևէ սեզոնային ճշգրտված ինդեքս չի հաշվարկվում:

**Տվյալների վավերացում**

Հնարավոր շեղումներ հայտնաբերվում են՝ հաշվարկելով վստահության ընդմիջումները յուրաքանչյուր ապրանքի գնի մակարդակի համար:

Մշակման ստուգումը՝մեծ գների տատանումների դեպքում, գնադիտարկողները պարզաբանում են, թե որոնք են դրանց պատճառները: Իրականացվում են ստուգողական այցելություններ այդ դիտարկման միավորներում՝ պարզելու համար հավաքագրված գնային տեղեկատվության ճշգրտությունը և արժանահավատությունը:

**Պարբերականություն և ժամկետներ**

*Պարբերականությունը* ՝ ամսեկան

*Ժամկետները* ՝ տվյալները հրապարակվում են հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրը:

**Համապատասխանություն**

*Ներքին համապատասխանություն* ՝ ամսեկան և տարեկան հրապարակումները տրամադրում են հետևյալ տվյալները ՍԳԻ համար՝ ա) բաշխումը ըստ ապրանքների և ծառայությունների 9 հիմնական խմբերի, բ) ըստ պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և հանրությանը մատուցված ծառայությունների 64 ենթախմբերի, գ) ըստ 11 հետազոտված բնակչության կենտրոնների, դ) Ըստ 470 ապրանքների, ե) 470 ապրանքների և ծառայությունների համար ըստ 11 հետազոտված բնակչության կենտրոնների միջին ամսեկան գների նույնպես հրապարակվում են:

*Ժամանակավոր համապատասխանություն* ՝ ամսեկան հրապարակումները տրամադրում են հետևյալ տվյալները ՍԳԻ համար ըստ տոկոսների՝ ա) բազիսային տարվա համեմատությամբ, բ) ընթացիկ ամիսը համեմատած նախորդ ամսվա հետ, գ) համեմատած նախորդ տարվա Դեկտեմբեր ամսվա հետ, դ) համեմատած նախորդ տարվա համապատասխան ամսվա հետ, ե) կուտակային հիմունքներով (համեմատելով նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի հետ): Տարեկան հրապարակումները տրամադրում են ամսեկան հրապարակումներում հրապարակված տվյալների նման տվյալներ, ինչպես նաև ա) շղթայական ինդեքսներ ըստ տարբեր ժամանակահատվածների, բ) միջին տարեկան ինդեքսներ, գ) եռամսյակային ինդեքսներ:

**Վերանայում**

ՍԳԻ հաշվարկվում է հունվարից -մարտ ընկած ամիսների համար (ապրիլ ամսին) օգտագործելով նոր կշիռները, երբ որ դրանք արդիականացվում են: Այլապես ինդեքսները համարվում են վերջնական հենց որ դրանք հրապարակվում են: Համապատասխան հրապարակումների մեջ տվյալները նշանակվում են որպես ընթացիկ (նախնական), վերանայված կամ վերջնական: Փոփոխված տվյալները ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:

**Տվյալների մատչելիություն**

Սպառողական գների ինդեքսի տվյալները տարածվում են, ձևափոխված Լասփեյրեսի ինդեքսով (2010 =100), ընդգրկելով Երևանը և հանրապետության 11 մեծ բնակչության կենտրոնները: Ինդեքսը դա 470 ապրանքների (901 ներկայացուցչական) գների կշռված միջին փոփոխությունն է: Տարածքային գների և ինդեքսների վերաբերյալ տվյալները ագրեգացվում են ընդհանուր Հայաստանի հանրապետության համար՝ օգտագործելով ԿԱՀ տվյալները: Առանձին ՍԳԻ կազմվում է 11 բնակչության կենտրոնների համար, որոնք ներկայացնում են հանրապետության բոլոր 11 շրջանները: ՍԳԻ հաշվարկվում է ինչպես ամբողջությամբ, այնպես էլ երեք հիմնական խմբերի համար՝ պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչքներ և ծխախոտ), ոչ պարենային ապրանքներ, ծառայություններ, ՍԳԻ հաշվարկվում է նաև հետևյալ ենթախմբերի համար՝ պարենային ապրանքներ, ոգելից խմիչքներ և ծխախոտ, հագուստեղեն և կոշկեղեն, վարձակալում, վառելիք և էլեկտրաէներգիա, կենցաղային պարագաներ, բժշկական խնամք և դեղորայք, տրանսպորտ և կապ, հանգստի պարագաներ և ծառայություններ, այլ ապրանքներ և ծառայություններ: Ինդեքսները ճշգրտված չեն ըստ սեզոնների: Տվյալները տարածվում են

տարբեր թղթային հրապարակումներով և ինտերնետով՝ հիմնականում հայերեն և ռուսերեն և որոշ դեպքերում նաև անգլերեն տարբերակով:

**Մեթատվյալներ**

Համառոտ մեթոդաբանական մեկնաբանություն ցուցանիշների վերաբերյալ հրապարակվում է Հայաստանի սոցիալ տնտեսական վիճակի վերաբերյալ ամսեկան տեղեկատվական զեկույցում, Հայաստանի վիճակագրական տարեգրքում և առավել մանրամասնորեն թեմատիկ հրապարակումներում:

ՍԳԻ ամսեկան ցուցանիշների պաշտոնական հրապարակումից հետո, տասնորյա ՍԳԻ գները (95 ից մինչև 470 ապրանքների համար) տրամադրվում են ՀՀ Կենտրոնական Բանկին և ՀՀ Կառավարությանն առնթեր պետական Հարկային Ծառայությանը ըստ իրենց պահանջի: Տասնօրյա գները ամսեկան ՍԳԻ ժամանակագրական բաշխումն է:

## Հավելված 5. ՀԱԳԻ Կանոնակարգի ներկայացում






## ՀԱԳԻ կանոնակարգերի բովանդակության վերանայում

- ՀԱԳԻ կանոնակարգերի խմբում ներկայացված է ՀԱԳԻ իրավական կառուցվածքը, որտեղ կանոնակարգվում են հետևյալ բաղադրիչները

- ❑ Ընդգրկումը
- ❑ Համադրելիության սահմանումը
- ❑ Ծածկույթ
- ❑ Գնի հավաքագրությունը
- ❑ Սպառման դասակարգումը
- ❑ Ինդեքսի տեսակը
- ❑ Համախտականությունը
- ❑ Որակի ապահովման ճշգրտումները
- ❑ Կշռվածություն
- ❑ Ընտրանքը
- ❑ Ժամանակացույցը
- ❑ Սպառման հատուկ դրույթների համար որոշակի ուղեցույցներ

## Շրջանակը

"ՀԱԳԻ պետք է հիմնված լինի **ապրանքների և ծառայությունների** գների վրա, որոնք հասանելի են անդամ երկրների **տնտեսական տարածքում** գնման համար և միտված են ապահովել **սպառողների պահանջների ուղղակի բավարարումը**"
Տնտեսական տարածքը սահմանված է ներառյալ լրացուցիչ անկլավները երկրի սահմաններում բացառելով "արտերկրի" տարածքային անկլավները
ՀԱԳԻն **գնաճի ինդեքս է**։

ՀԱԳԻ **կարող է փոխարինել ՍԳԻ, կամ լրացնել այն։** ԵՄ երկրների մեծ մասը ունի երկու ինդեքսներն էլ, որոնք ծառայում են տարբեր նպատակների համար։

---

ԵՄ անդամ երկրները անցում կատարեցին դեպի ՀԱԳԻ ներկայացնելով ժամանակավոր ՀԱԳԻ, որը հիմնված էր ներկայիս տվյալների վրա և բացառում էր ավելի բարդ դրույթները

---

## Համադրելիություն

**Համադրելի չեն**

ՀԱԳԻ-երը, որոնք ունեն մի շարք տարբերություններ, ի հասկացության, մեթոդների, կամ ուղեցույցերի մեջ, որոնք կիրառվել են դրանց սահմանման և կազմման համար

**Համադրելի են**

ՀԱԳԻ –երը, որոնք արտացոլում են միայն երկրների միջև գների փոփոխությունների և սպառողական կառուցվածքի տարբերությունները

Մեթոդներ, որոնց կիրառմամբ հնարավոր է ստանալ ինդեքսներ, որոնք միջինում տարեկան կտրվածքով տարբերվում են ավելի քիչ,քան 0,1 համեմատելով կանոնակարգերում սահմանված մեթոդների հետ

STATISTICS DENMARK

## Ծածկույթ

**Տնային տնտեսության վերջնական դրամական սպառում**

ՀԱԳԻ ներառում է միայն տնային տնտեսությունների վերջնական դրամական սպառման ցուցանիշները

Ներառում է (օրինակ)

- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]

Բացառում է (օրինակ)

- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible]
- [illegible] FISIM

STATISTICS DENMARK

## Ծածկույթ (շարունակություն)

**<u>Պետք է ներառի բնակչության բոլոր սպառումները</u>**

- Եկամուտի բաշխման բոլոր մասերը
- Երկրի բոլոր մասերը

- Անկախ ազգությունից և կացության կարգավիճակից
- Կառուցվածքային տնային տնտեսությունում բնակվող անհատներ

**<u>COICOP-ՀՍԳԻ</u>**

- ՀՍԳԻ պետք ներառի **COICOP-ՀՍԳԻ** նշված բոլոր կատեգորիաների ինդեքսները և կշիռները (որոշ բացառություններով)

**<u>Երբ ներառել արտադրանքը</u>**

- Արտադրանքը պետք է ներառվի ինդեքսի մեջ, երբ այն ավելի է, քան մեկը բոլոր կատեգորիաները ընդգրկող ողջ ծախսերի հազարում

STATISTICS D NMARK

## Գներ

**<u>Ինչպիսի գներ</u>**

Տնային տնտեսությունների կողմից վճարված գնման գումարը անհատական ապրանք և ծառայություն գնելու համար որպես դրամական գործարքներ

**<u>Երբ ներառել գները</u>**

- ***Ապրանքներ***՝ գնի դիտարկման ամսում
- ***Ծառայություններ***՝Այն ամսում ,երբ ծառայության սպառումը կարող է սկսվել դիտարկվող գներով

STATISTICS D NMARK

## Գներ (շարունակություն)

### Գների նվազում

ՀՍԳԻյում պետք է հաշվի առնվի հետևյալ գների նվազումները

- Վերագրվում է անհատական ապրանքի կամ ծառայության ձեռքբերմանը և
- Հասանելի է բոլոր պոտենցիալ սպառողների համար առանց հատուկ կից նշված պայմանների և
- Հայտնի է գնորդին գնման ընթացքում և
- Կարող է բողոքարկվել գնման ընթացքում

## Գներ (շարունակություն)

### Բացակայող գնային ցուցանիշներ

**Ամսական դիտարկումներ**

- Առաջին կամ երկրորդ ամիսների համար կարող են օգտագործվել գնահատումներ, բայց երրորդ ամսվա համար պետք է օգտագործվեն փոխարինող գներ

**Ամսականից ավելի ուշ հաճախականությամբ կատարվելիք դիտարկումներ**

- Առաջին ժամանակահատվածի համար կարող են օգտագործվել գնահատումներ, բայց երկրորդ ժամանակահատվածի համար պետք է օգտագործվեն փոխարինող գներ

## Սպառման դասակարգում

Դասակարգումը ուժի մեջ է:

- COICOP-ՀՄԳԻ
- 4 նիշ մակարդակ

Պատրաստման աշխատանքներ են տարվում ներկայացնելու հետևյալ դասակարգումը

- COICOP-ՀՄԳԻ/HBS/PPP (պատրաստման փուլում)
- 5 նիշ մակարդակ

**NB!**

Որոշ ապրանքներ և ծառայություններ ընդգրկված են դասակարգման մեջ, սակայն ՀՄԳԻ պահանջների մաս չեն կազմում

## Ինդեքսի տեսակներ

Տարրական ագրեգատներ

Jevons ինդեքս:

$$I_J = \prod \left(\frac{p_i^t}{p_i^0}\right)^{1/n} = \frac{\prod (p_i^t)^{1/n}}{\prod (p_i^0)^{1/n}}$$

Dutot ինդեքս:

$$I_D = \frac{\frac{1}{n}\sum p_i^t}{\frac{1}{n}\sum p_i^0} = \frac{\sum (p_i^t/p_i^0)\, p_i^0}{p_i^0}$$

- Թույլատրվում է իրականացնել տարրական ինդեքսների միաձուլում
- Գների հարաբերական թվաբանական նշանակությունը չի կարող ինքնաբերաբար օգտագործվել (միաձուլման ժամանակ գրանցվում է աճողական շեղում)

**Ագրեգացված ինդեքսներ**

Laspeyres տեսակի ինդեքս:

$$I_L = \frac{\sum p_t q_0}{\sum p_0 q_0} = \frac{p_0 q_0}{\sum p_0 q_0} \sum \frac{p_t}{p_0} = \sum w_0 \frac{p_t}{p_0}$$

## Համախականություն

**Տվյալների հավաքագրում**

- Պետք է իրականացվի յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ
- Ավելի քիչ համախականությամբ, եթե համաձայն գնահատումների այն շարունակում է բավարարել համադրելիության պահանջներին

**ՀՍԳԻ կազմումը**

- Պետք է կազմվի ամիսը մեկ անգամ

STATISTICS DENMARK

## Որակի ապահովման ճշգրտումներ

- Սկզբունքորեն պետք է հիմնված լինի որակի փոփոխման արժեքի բացահայտ գնահատումների վրա
- Այն դեպքում, երբ չկան գնահատումներ, գնի փոփոխությունը պետք է հաշվարկվի որպես փոխարինող ապրանքի և փոխարինված ապրանքի գների տարբերություն
- Ոչ մի դեպքում որակի փոփոխությունը չպետք է գնահատվի որպես երկու միավորների ամբողջական փոփոխություն, մինչդեռ այն կարող է հիմնավորվել որպես համապատասխան գնահատում

STATISTICS DENMARK

## Կշռվածություն

**’Կշռվածության հաշվետու ժամանակաշրջան’:**

Սպառման կամ ծախսերի 12 ամսյա ժամանակահատվածը, որտեղից գնահատվում են կշիռները վերջնական ՀԱԳԻ ցուցանիշների կազմման համար

---

- Ընթացիկ տարում օգտագործվող կշիռները պետք է լինեն որքան հնարավոր է ներկայացուցչական նախորդ օրացուցային տարվա սպառողական ծախսերի համար
- Վերանայվում է տարեկան՝ օգտագործելով ազգային հաշիվների տվյալները t-2 տարվա ցուցանիշներով
- Ազգային հաշիվների ցուցանիշները կարող են փոխարինվել նմանատիպ տեղեկատվությամբ՝ տնային տնտեսությունների բյուջեի հետազոտություններից կամ այլ վստահելի աղբյուրներից

## Կշռվածություն (շարունակություն)

- Ենթաինդեքսների տակ կշիռները չպետք է գերազանցեն 7 տարվա վաղեմությունը
- Կշիռները պետք է լինեն գնային առումով արդիականացված մինչև նախորդ տարվա դեկտեմբեր ամիսը
- Կշիռների փոփոխությունը ուժի մեջ է մտնում հունվարի ինդեքսից, և նախորդ տարիների ՀԱԳԻ չի վերանայվում

## Ընտրանք

### Ընտրանքը պետք է լինի

- Բաղկացած սպառված ապրանքներից
- Ներկայացնի օրացուցային ամսվա միջին գները
- Հաշվի առնի ապրանքների գների փոփոխականությունը
- Ունենա բավարար նախնական ագրեգատներ՝ ներկայացնելու իրերի բազմազանությունը կատեգորիայի շրջանակում

STATISTICS DENMARK

## Ժամանակացույց

**Գների հավաքագրում:**

- Գների հավաքագրումը պետք է իրականացվի օրացուցային ամսվա նվազագույնը մեկ աշխատանքային շաբաթվա այն ժամանակահատվածի համար, որին պատկանում է ինդեքսը
- Միևնույն ամսում գների անկանոն և կտրուկ փոփոխություններով ապրանքների համար ( օրինակ էլեկտրաէներգիայի և թարմ պարենային ապրանքների համար) գների հավաքագրումը պետք է ընթանա մեկ աշխատանքային շաբաթից ավելի երկար ժամանակահատվածի համար

STATISTICS DENMARK

## Սպառման հատուկ ոլորտների համար որոշակի կանոնակարգեր

- **Սեզոնային ապրանքներ**
  - Ապրանքներ, որոնք ողջ տարվա ընթացքում հասանելի չեն շուկայում, կամ գնվում են շատ փոքր քանակությամբ
- Առողջապահություն, կրթություն, սոց. ապահովություն
- Ապահովագրություններ
- Սակագներ
- Ծառայության փոփոխության համարժեք գործարքի արժեք

STATISTICS DENMARK

# Հավելված 6. Աշխատանքային ծրագիր

***ԵՄ Թվինինգ ծրագիր***
***Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով***
***AM09/ENP-PCA/TP/04***

## ՀՍԳԻ աշխատանքային ծրագիր Հայաստանի համար

| Առաջադրանքը/ժամկետը | 2011 | 2012 | 2013 |
|---|---|---|---|
| | Ապրիլ Մայիս Հունիս Հուլիս Օգոստոս Սեպտ Հոկտ □□□□□ Դեկտեմբերն | Հունվարը □□□□ Մարտ Ապրիլ □□յ□□ Հունիս Հուլիս Օգոստոս Սեպտ Հոկտ Նոյեմբ Դեկտեմբեր | Հունվար |
| **Ընտրանք և որակի ճշգրտումներ** | | | |
| - Վերլուծել գների հավաքագրումը յուրաքանչյուր ամսվա 1 ից հանելու ազդեցությունը | | | |
| Գների հավաքագրման փոփոխման կազմակերպ. փոփոխությունները | | | |
| - Ընտրաանքի տարեկան արդիականացում՝ օգտագործելով Գնադիտարկողներին գնահատելու ներկայացուցչական ապրանքները | | | |
| - Որոշել թե սպառման որ ոլորտների համար է անհրաժեշտ փոփոխել Որակի ճշգրտման մեթոդները | | | |
| - Որակի ճշգրտումնր տեխնոլոգիական արտադրանքների համար | | | |
| - Ընտրանքի նվազեցում. Ամսվա մեջ ավելի քիչ ընտրանքային օրեր | | | |
| - Ապահովել բավարար էլեմենտար ագրեգատներ՝ներկայացնլու համար տարբեր ապրանքներ COICOP -ի յուրաքանչյուր կատեգորիայում | | | |
| **Կշռվածություն** | | | |
| - Որոշել թե արդյոք հնարավոր է ՏԲՀ բաժնի կողմից COICOP/HICP կիրառումը այս ծրագրի շրջանակում | | | |
| - Հիմնվելով Հայաստանի փորձի և գիտելիքների վրա Նախապատրատել նոր արտադրանքի համակարգ կշիռների համար | | | |
| - Ստեղծել EXCEL համակարգ՝ կշիռների փոփոխումը առավել Առավել քիչ ժամանակատար դարձնելու համար | | | |
| - Ավտոմեքենաների ապահովագրության ներառումը ՏԲՀ | | | |
| - Ավտոմեքենաների ապահովագրման կշիռների հաշվարկում | | | |
| **Գնային հասկացություն** | | | |
| - Գտնել ավելի քիչ ժամանակատար միջոցներ բացակայող/համընկնող գների ստուգման համար: EXCEL լուծումներ: | | | |
| - Ներառել ծառայությունները այն ամսվա ինդեքսների մեջ որ ամսվա մեջ որ դրանք սպառվել են | | | |
| **Սպառման դասակարգում** | | | |
| - Նախապատրաստել COICOP/HICP կշիռները և գների բաշխումը | | | |
| **Ընդգկում** | | | |
| - Ներառել ավտոմեքենաների ապահովագրությունը ընտրանքի մեջ | | | |
| - Վերլուծություններ կապված սպառման առավել շատ ոլորտներ ներառելու ինդեքսներում Ելնելով դրանց կշիռներից՝ օգտագործված մեքենաներ<br>Մանկապարտեզներ 12.4, խմբում, ինտերնետ խանութներ | | | |
| **Սպառման հատուկ ոլորտներ** | | | |
| - Սեզոնային ապրանքներ. Վերլուծություններ և որոշումների կայացում | | | |

# ՀՍԳԻ աշխատանքային ծրագիր Հայաստանի համար

**Առաջադրանքը / ժամկետը** — **2011** Ապրիլ, Մայիս, Հունիս, Հուլիս, Օգոստոս, Սեպտ., Հոկտ., Նոյեմբ, Դեկտ. — **2012** Հունվար, Փետր, Մարտ, Ապրիլ, Մայիս, Հունիս, Հուլիս, Օգոստոս, Սեպտեմ, Հոկտ., Նոյմ, Դեկտ. — **2013** Հունվար

**Այլ թեմաներ**

- Տալ առաջարկներ թե արդյոք պետք է արտադրել և ՍԳԻ և ՀՍԳԻ, թե միայն ՀՍԳԻ ապագայում՝ ելնելով Փորձնական ՀՍԳԻ արդյունքների հաշվարկների վրա:
- Իրականացնել փոփոխված աշխատանքային գործընթացները Վիճակագրական տարածքային գրասենյակներում

Հաղորդակցություն

**Առաքելություններ**

4-14 / 4

**Գործունեություն Ե.1+2.:** *Հարցերի պարզաբանում/ Այլընտրանքների Որոշում :*
Մարտին Լարսեն և Քիրստեն Բալլինգ

5-9 / 9

**Գործունեություն Ե.3.:** *Աջակցության առաքելություն Հայաստանում*
Փոլ Լուբսոն և Օսկարս Ալկսնիս

12-16 / 3

**Գործունեություն Ե4.:** *Սեմինար ԱՊ և ՇԵ քաղաքականության Փորձագետների հետ՝ տարածքային Գրասենյակների մասնակցությամբ:*
Նադեժդա Ալեվչյա և Օսկարս Ալկսնիս

4-8 / 6

**Գործունեություն Ե 5.:** Ուսուցողական այցելություն
Դանիայի վիճակագրություն ՇԵ 3 *փորձագետների հետ*

3-7 / 12

**Գործունեություն Ե 6.** Սեմինար ԱՊ փորձագետների կողմից
*Armenia:* Հայաստանում. Քիրստեն Բալլինգ և Նադեժդա Ալեվչյա